ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073- 57

0231-6-09-36

02 ապրիլի 2012թ.

գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտ ամսվա արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

Համայնքի ղեկավար Հ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 04708403

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3056-12
03 04 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

07 մարտի 2012 թ. Թիվ 3

ԱՐԱՄ ԱԲԳԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Արամ Աբգարյանի 2012 թվականի փետրվարի 23-ի ծանուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2012 թվականի մարտի 12-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Արամ Աբգարյանի հետ 2011 թվականի մարտի 4-ի թիվ 16 պայմանագիրը՝ ազատելով իր զբաղեցրած պաշտոնից:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Գրիգորյան

2012 թվականի մարտի 7
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

07 մարտի 2012թ. Թիվ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Օնիկ Սարգսյանի 2012 թվականի մարտի 7-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի մարտի 12-ից Օնիկ Սարգսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ նշանակելով նրան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

2012 թվականի մարտի 7
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2012թ. Թիվ 3-Ա

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների /կուսակցությունների դաշինքների / քարոզչական պաստառները փակցնելու համար Արշալույս գյուղական համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1. 1-ին փողոցի 28 բնակելի տան վրա - 2քմ
2. 1-ին փողոցի 59 բնակելի տան վրա - 2քմ
3. 1-ին փողոցի 79 բնակելի տան վրա - 2քմ
4. 1-ին փողոցի 50 շինության վրա - 2քմ
5. 19-ին փողոցի 17 բնակելի տան վրա - 4քմ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

2012 թվականի մարտի 12
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2012թ. Թիվ 4-Ա

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17- րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին Արշալույս համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել՝
1) թիվ 1 ընտրական տեղամասում տեղամասային կենտրոն սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի Սամվել Գրիգորյանի անվան պետական ոչ առևտրային կազմակերպություն միջնակարգ դպրոցի շենքը՝ տիրապետող Էմիլ Եղիազարյան:
2) թիվ 2 ընտրական տեղամասում տեղամասային կենտրոն սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի փոստի շենքը՝ տիրապետող Հռիփսիմե Ավագյան:
2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ.Գրիգորյան

2012 թվականի մարտի 12
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

23 մարտի 2012թ. Թիվ 5

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 2 փողոցի թիվ 28 հասցեում գտնվող Սարիբեկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը կից զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 126.0 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1126.0 քմ հողամասի և հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Սարիբեկ Պետրոսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.ՈՒժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2012 թվականի փետրվարի 27-ի թիվ 2 որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում [illegible] պահից:

Համայնքի ղեկավար Զ. Գրիգորյան

2012 թվականի մարտի 23
գ. Արշալույս